ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆԱՏՕ/ԵՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.254

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածն անդրադառնում է Հարավային Կովկասում Ռուսաստանի և ՆԱՏՕ/ԵՄ-ի միջև առկա աշխարհաքաղաքական ուժային հարաբերությունների մրցակցությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ինտեգրացիոն գործընթացներին և էներգետիկ անվտանգությանը: Մասնավորապես վերլուծվում են ռազմավարական փաստաթղթերում տեղ գտած ՆԱՏՕ-ի մոտեցումները և շահերի բախման կետերը Հարավային Կովկասում: Հետազոտության մեջ հիմնավորվում է, որ Ռուսաստանն իր ազդեցությունն ապահովում է ինչպես երկկողմ հարաբերությունների, այնպես էլ բազմակողմ կառույցների, մասնավորապես՝ ՀԱՊԿ-ի միջոցով: Միևնույն ժամանակ, ՆԱՏՕ-ն տարածաշրջանում կիրառում է բազմաշերտ ու դինամիկ մոտեցում (օրինակ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը), որի ուսումնասիրությունը կարևոր է տարածաշրջանային արդի զարգացումներն ու միջազգային հարաբերությունների միտումները հասկանալու համար:

Հետազոտության նորույթը պայմանավորված է նրանով, որ ուժային հավասարակշռության վերափոխումը դիտարկվում է նեոռեալիստական վերլուծական շրջանակում՝ հինգ փոխկապակցված գործոնների (ռազմական ներկայություն, դաշինքների վերակազմավորում, էներգատրանսպորտային միջանցքներ, բազմավեկտորություն և գլոբալ ճգնաժամեր) համադրմամբ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկապես Ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի ռեսուրսային սահմանափակումներն ու Արևմուտքի

ակտիվացումը խորացրել են մրցակցային դինամիկան՝ ձևավորելով բազմաբևեռ միջավայր, որտեղ Հարավային Կովկասի երեք պետությունները (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) դրսևորում են էականորեն տարբերակված ռազմավարական վարքագիծ:

Հոդվածում այս երկու կառույցների համեմատական վերլուծությունների հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգը՝ համադրելով պետական և տարածաշրջանային իրողությունները, սեփական անվտանգային ճարտարապետությունը պետք է կառուցի առկա շահերի համադրմամբ և արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացմամբ:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Հարավային Կովկաս, ՆԱՏՕ, Ռուսաստան, ռազմավարություն, աշխարհաքաղաքական շահեր, ինտեգրացիոն գործընթացներ, շահերի բախում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Հարավային Կովկասը դարձել է միջազգային դերակատարների մրցակցային շահերի հատման կարևոր տարածք: Տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը պայմանավորված է աշխարհագրական դիրքով, էներգետիկ ու տրանսպորտային միջանցքներով և Եվրոպան, Մերձավոր Արևելքն ու Եվրասիան կապող հանգույց լինելու հանգամանքով: Ուկրաինական պատերազմից հետո նկատվում են ուժային հարաբերակցությունների վերաձևավորման միտումներ՝ պայմանավորված Ռուսաստանի ազդեցության վերաիմաստավորմամբ և ՆԱՏՕ-ի ու Հավաքական Արևմուտքի ակտիվության աճով: Արդյունքում ձևավորվում է նոր մրցակցային միջավայր, որտեղ տարածաշրջանի պետությունները տարբեր կերպ են արձագանքում արտաքին ուժային կենտրոնների ազդեցությանը:

Գիտական գրականության մեջ լայնորեն ուսումնասիրվել են Ռուսաստանի դերակատարությունը, ՆԱՏՕ-ի ծրագրերը և տարածաշրջանի էներգետիկ նշանակությունը **(Kruessmann T., 2024),** սակայն սահմանափակ են այն հետազոտությունները, որոնք ուժային հարաբերակցությունների փոփոխությունը

դիտարկում են միաժամանակ Ռուսաստան–ՆԱՏՕ մրցակցության, ինտեգրացիոն գործընթացների և էներգետիկ անվտանգության փոխկապակցվածության համատեքստում:

Հետազոտության նպատակն է վերլուծել Հարավային Կովկասում ձևավորվող ուժային հարաբերակցությունների փոփոխությունը՝ գնահատելով Ռուսաստանի և ՆԱՏՕ/ԵՄ մրցակցության հիմնական ուղղությունները, դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության վրա, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքական ռազմավարությունները:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ մրցակցությունը դիտարկվում է որպես բազմագործոն գործընթաց: Առաջարկվում է հեղինակային վերլուծական շրջանակ, որի հիմքում ընկած են արտաքին ռազմական ներկայության փոփոխությունը, դաշինքների վերակազմավորումը, էներգետիկ միջանցքների մրցակցությունը, պետությունների բազմավեկտոր քաղաքականության խորացումը և գլոբալ ճգնաժամերի ազդեցությունը: Գիտագործնական արժեքն այն է, որ ռազմավարական փաստաթղթերի վերլուծության հիման վրա բացահայտվել են ուժային հարասարակշռության վերափոխման միտումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության տեսական հիմքը կազմել են քաղաքական ռեալիզմի և նեոռեալիզմի դրույթները, որոնք մշակվել են Հանս Մորգենթաուի (**Morgenthau H., 2006**), Քենեթ Ուոլցի (**Waltz K., 1979**) և Ջոն Միրշայմերի (**Mearsheimer J., 2001**) աշխատություններում:

Քաղաքական ռեալիզմը և նեոռեալիզմը միջազգային հարաբերությունները դիտարկում են որպես անարխիկ համակարգ, որտեղ պետությունների վարքագիծը պայմանավորված է անվտանգության ապահովման, ուժային հավասարակշռության և ազդեցության գոտիների վերահսկման ձգտմամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացատրել Հարավային Կովկասում Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի միջև ռազմավարական մրցակցության տրամաբանությունը: Թեև լիբերալ ինստիտուցիոնալիզմը կարևորում է միջազգային կազմակերպությունների դերը, իսկ կոնստրուկտիվիզմը՝ նորմերի ու

ինքնությունների ազդեցությունը, սույն հետազոտության առարկան վերաբերում է ուժային հարաբերությունների վերափոխմանը և մեծ տերությունների ռազմավարական վարքագծին: Հետևաբար, նեոռեալիզմը կիրառվում է որպես վերլուծական գործիք՝ բացատրելու ուժային հավասարակշռության փոփոխությունները, մեծ տերությունների մրցակցությունը և դրանց ազդեցությունը տարածաշրջանի անվտանգության ճարտարապետության վրա: Այս գործընթացները համապատասխանում են նաև վերջին ուսումնասիրություններին, որոնցում նշվում է, որ Հարավային Կովկասում ձևավորվում է մրցակցային անվտանգային միջավայր **(Manukyan Z., 2024):**

Հետազոտության նպատակին հասնելու համար կիրառվել է մեթոդների համակցված համակարգ.

- **Համեմատական վերլուծության մեթոդ.** համադրվել են Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի ռազմավարական մոտեցումները, քաղաքական ու անվտանգային գործիքակազմերը, ինչպես նաև ազդեցության իրականացման մոդելները երկկողմ ու բազմակողմ ձևաչափերում:
- **Բովանդակային վերլուծության մեթոդ.** ուսումնասիրվել են ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգերը, ՀԱՊԿ փաստաթղթերը, ԵՄ քաղաքական ծրագրերն ու փորձագիտական հրապարակումները՝ դերակատարների առաջնահերթություններն ու շահերի բախման ուղղությունները բացահայտելու համար:
- **Աշխարհաքաղաքական վերլուծության մեթոդ.** գնահատվել են Հարավային Կովկասի աշխարհագրական դիրքը, տարանցիկ ու էներգետիկ նշանակությունը և տարածաշրջանի ռազմավարական արժեքը գլոբալ ուժային համակարգերում:
- **Քեյս-ստադի մեթոդ.** ուսումնասիրվել են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները՝ տեսական ընդհանրացումները կոնկրետ գործընթացների հետ կապելու նպատակով:

- **Պատմահամեմատական մեթոդ.** օգտագործվել է հետխորհրդային շրջանից մինչ օրս տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների ուսումնասիրության և մրցակցության հիմնական փուլերի առանձնացման համար:

Մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել ապահովել հետազոտության համալիր բնույթը և բազմակողմանիորեն գնահատել Հարավային Կովկասում ձևավորվող ուժային հարաբերակցությունների փոփոխությունը Ռուսաստան–ՆԱՏՕ մրցակցության համատեքստում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ռազմավարական փաստաթղթերում ՆԱՏՕ-ի մոտեցումները Հարավային Կովկասի նկատմամբ

ՆԱՏՕ-ի վերջին տասնամյակների ռազմավարական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դաշինքի և ԱՄՆ-ի մոտեցումները Հարավային Կովկասի նկատմամբ ենթարկվել են էվոլյուցիայի՝ պայմանավորված միջազգային անվտանգության միջավայրի փոփոխություններով և Ռուսաստան-Արևմուտք մրցակցության սրմամբ:

ԱՄՆ-ի 2017 թ. Ազգային անվտանգության ռազմավարությունում Թրամփի վարչակազմը սահմանափակ անդրադարձ է կատարել տարածաշրջանին՝ առանձնացնելով միայն «Ռուսաստանի՝ Վրաստան ներխուժման» թեման: Մինչդեռ 2022 թ. ռազմավարությունում ընդգծվում է ԱՄՆ-ի պատրաստակամությունը՝ աջակցելու «Վրաստանի եվրոպական նկրտումներին» և «Հարավային Կովկասում հակամարտությունների լուծմանն ուղղված դիվանագիտական ջանքերին»: Նույն փաստաթղթում տարածաշրջանը դիտարկվում է նաև «ռուսական միջամտության նկատմամբ կայունության» բարձրացման համատեքստում **(NSS, 2022)**: Ֆրանսիայի 2022 թ. ռազմավարական փաստաթղթում ևս Հարավային Կովկասը ներկայացված է սահմանափակ ձևով. հիշատակվում է միայն Վրաստանը՝ որպես «Եվրոպական հարևանության» ծրագրի մաս **(NSR, 2022)**: Նմանատիպ մոտեցում է արձանագրվում նաև Գերմանիայի 2023 թ. առաջին Ազգային անվտանգության ռազմավարությունում, որտեղ ԵՄ ինտեգրման հեռանկարների համատեքստում նույնպես առանձնացվում է միայն Վրաստանը **(Lampe F., 2023)**:

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի 2017 և 2022 թվականների փաստաթղթերում մոտեցումների էվոլյուցիան պայմանավորված է եվրասիական ուժային համակարգում Ռուսաստանի ազդեցության սահմանափակման ռազմավարությամբ: Արդյունքում տարածաշրջանը դիտարկվում է որպես Արևելյան Եվրոպան, Սևծովյան ավազանը և Կասպյան տարածաշրջանը կապող անվտանգային ու էներգետիկ հանգույց, ինչը մեծացնում է ՆԱՏՕ-ի քաղաքական հետաքրքրվածությունը նույնիսկ ուղղակի ռազմական ներկայության սահմանափակ պայմաններում:

Միևնույն ժամանակ, տարածաշրջանը դիտարկվում է Ռուսաստանի հետ մրցակցության և եվրոպական ինտեգրման գործընթացների համատեքստում: ՌԴ ազգային անվտանգության ռազմավարություններում և արտաքին քաղաքականության հայեցակարգերում մշակման ժամանակ հաշվի է առնվել ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգը **(Захарова М., 2022)**[1]: 2004 թ. Բուլղարիայի և Ռումինիայի ՆԱՏՕ-ին, ապա 2007 թ. Եվրամիությանը միանալուց հետո, Հարավային Կովկասը սկսեց դիտվել որպես ՆԱՏՕ-ի և եվրոպական անվտանգության ճարտարապետության նոր սահման: Հարավային Կովկասի երեք պետությունների հետ համագործակցության ռազմավարությունը ներկայացվել է Բրյուսելում՝ դաշինքի 2023 թվականի զեկույցում **(Jiráček M., 2025):** Փաստաթղթում նշվում է, որ ՆԱՏՕ-ն ակտիվորեն համագործակցում է այդ երկրների ղեկավարների ու քաղաքացիական հասարակության հետ և աջակցություն է հայտնում երեք գործընկերներից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությանը, քաղաքական անկախությանն ու ինքնիշխանությանը:

Ամփոփելով նշենք, որ քննարկված ռազմավարական բոլոր փաստաթղթերում առկա է մի կարևոր նրբություն. տարածաշրջանը չի առանձնացվում որպես առաջնային ուղղություն, այլ ընդգրկվում է Եվրոպա-Եվրասիա լայն շրջանակում: Հայեցակարգային նման մոտեցումը հնարավորություններ է ստեղծում

[1] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Պողոսյան Ա. (2026)**: ՌԴ ռազմական ներկայության իրավաքաղաքական հիմքեր, միջազգային պայմանագրեր և ռազմակայանների դուրսբերման գործընթացները Հարավային Կովկասում: «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատ. ԺԷ, # 2 (63), 2026, էջ 58-65

Հայաստանի Հանրապետության համար՝ համադրելով պետական և տարածաշրջանային իրողությունները, սեփական անվտանգային ճարտարապետությունը կառուցել առկա շահերի համադրմամբ:

ՆԱՏՕ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ ներկա դիրքեր և ռազմավարական շահերի մրցակցություն

ՆԱՏՕ-ի քաղաքականության մեջ Հարավային Կովկասի ուղղությամբ, դժվար թե որևէ բան փոխվի, որովհետև իրական քաղաքական ուղեգիծը որոշում է նախևառաջ ԱՄՆ-ն, այլ ոչ թե եվրոպական կորիզը: Ըստ Վրաստանում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի փորձագետ Մագնուս Գեյր Էյոլֆսոնի՝ Դաշինքը Հարավային Կովկասը չի դիտարկում որպես աշխարհաքաղաքական առճակատման կամ «Մեծ խաղի» թատերաբեմ **(Iskandarov K., Simons G., and Gawliczek P., 2019)**: Նրա մոտեցման հիմքում ընկած է այն թեզը, որ ժամանակակից անվտանգության համակարգում ազդեցության գոտիների համար պայքարը հնացած է: Փոխարենը, ՆԱՏՕ-ն առաջնահերթություն է համարում տարածաշրջանի երկրների ինքնիշխանությունը, ժողովրդավարական բարեփոխումները և յուրաքանչյուր պետության՝ սեփական անվտանգային ուղին ազատորեն ընտրելու իրավունքը: Այս համատեքստում Դաշինքի ներգրավվածությունը միտված է ոչ թե մրցակցությանը, այլ կայուն գործընկերությանն ու տարածաշրջանային անվտանգության ամրապնդմանը: Տվյալ հարցը հենց կառույցի ներսում վիճաբանությունների տեղիք է տվել Գերմանիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի միջև, հետևաբար նրանք, հետխորհրդային տարածքից որևէ երկրի առժամանակ չեն ընդունի որպես դաշինքի լիիրավ անդամ **(Մարգարյան Մ., 2023)**: Հարավային Կովկասում Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի /Արևմուտքի/ մրցակցությունը, Ուկրաինական ճգնաժամի ազդեցության ներքո, վերաճել է առավել սուր աշխարհաքաղաքական դիմակայության: 2024–2026 թթ. տարածաշրջանը գտնվում է խորքային վերափոխումների փուլում, որոնք պայմանավորված են Արևմուտք–Ռուսաստան հակադրության ինտենսիվացմամբ և դրա ազդեցության ընդլայնմամբ տարածաշրջանային գործընթացների վրա: Նույն եզրակացությանն են հանգում նաև Կակաչիան և համահեղինակները **(Kakachia K., Gurbanli N., Valiyev A., et al.,**

2024), որոնք նշում են, որ 2020–2024 թվականներին Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցությունը չի վերացել, սակայն էականորեն փոխվել են դրա գործիքներն ու արդյունավետությունը:

Այսպիսով, ՆԱՏՕ-ի ռազմավարական փաստաթղթերի և անդամ պետությունների ռազմավարական մոտեցումների համադրական վերլուծությունը վկայում է, որ Դաշինքի առաջնահերթությունը Հարավային Կովկասում ուղղակի ռազմական ընդլայնումը չէ, այլ քաղաքական գործընկերության, պաշտպանական կարողությունների զարգացման, էներգետիկ անվտանգության և ճգնաժամերի կառավարման միջոցով ազդեցության աստիճանական խորացումը: Այս մոտեցումը ցույց է տալիս, որ ժամանակակից աշխարհաքաղաքական մրցակցությունը տարածաշրջանում աստիճանաբար տեղափոխվում է դասական ռազմական հակադրությունից դեպի «փափուկ անվտանգության» գործիքների կիրառման տիրույթ, որտեղ առավել մեծ նշանակություն են ստանում քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ ազդեցության մեխանիզմները:

Հարավային Կովկասի պետությունների տարբերակված ռազմավարությունները ՆԱՏՕ-ի նկատմամբ

Թեև ՆԱՏՕ-ն տարածաշրջանում ունի սահմանափակ դեր, Ռուսաստանը շարունակում է մնալ հիմնական ազդեցիկ ուժը՝ ինչպես անցյալի, այնպես էլ ընթացիկ հակամարտությունների միջոցով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իր գերազդեցության պահպանումը դարձել է Մոսկվայի արտաքին քաղաքականության առաջնահերթությունը: Տարածաշրջանը վերածվել է Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի միջև մրցակցության խաղադաշտի: Այս պայմաններում Հարավային Կովկասի պետությունների ազգային անվտանգության շահերը պետք է դառնան բանակցային գործընթացի անբաժանելի մաս: Ադրբեջանի և Վրաստանի հետ համագործակցության աստիճանն ու խորությունը տարբերվում են Հայաստանի հետ համագործակցությունից:

2008 թ. Վրաստանում Ռուսաստանի ռազմական գործողություններից հետո Ադրբեջանն ամրապնդեց իր արտաքին քաղաքականության բազմավեկտոր բնույթը. 2011 թվականին դարձավ Չմիավորման շարժման /ՉՄՇ/ անդամ և

հայտարարեց, որ չի ձգտում անդամակցել ՆԱՏՕ-ին կամ ՀԱՊԿ-ին: Այնուամենայնիվ, Ադրբեջանը մեծ նշանակություն է տալիս ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններին՝ համագործակցելով ահաբեկչության դեմ պայքարում և տարածաշրջանային անվտանգության ապահովման ուղղություններով: Այստեղ Բաքուն կարևոր քաղաքական ռեսուրս է դիտարկում Թուրքիային: Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանը զարգացնում է իր զինված ուժերը՝ դրանք համապատասխանեցնելով ՆԱՏՕ-ի չափանիշներին, ինչը նպաստում է ռազմական կարողությունների արդիականացմանը: Այս համընկնող շահերը հիմք են ստեղծում բազմակողմ համագործակցության հետագա խորացման համար: Եվրամիությունը ևս համագործակցում է Ադրբեջանի հետ էներգետիկ ոլորտում, ինչի արդյունքում աճում է նրա տնտեսական ներուժը: Միևնույն ժամանակ, Ադրբեջանը չի ցանկանում լինել Մոսկվայի գլխավորած կազմակերպություններում, իսկ 2024-2025 թթ. մի շարք միջադեպեր լարեցին ռուս-ադրբեջանական հարաբերությունները:

Ռուսաստանի ագրեսիայի հետևանքով Վրաստանի ԱՊՀ-ից դուրս գալը նշանավորեց Մոսկվայի ազդեցության նվազում, որը խորացավ դիվանագիտական հարաբերությունների կասեցմամբ: Արդյունքում Վրաստանը հստակ կողմնորոշվեց դեպի արևմտյան ինտեգրում: Երկիրը 2023 թվականից ԵՄ թեկնածու է և ակտիվորեն համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ: Սակայն այսօր ինտեգրման գործընթացը կանգնած է, քանի որ Եվրամիությունը պաշտոնապես սառեցրել է այն՝ ժողովրդավարական հետընթացի պատճառով: Մինչ օրս պարզ չէ, թե ինչպես կարող է «5-րդ հոդվածը» տարածվել մի երկրի վրա, որի տարածքի մի մասը չի վերահսկվում նրա կողմից: Մոսկվան, մեղադրելով ՆԱՏՕ-ին տարածաշրջանն անկայունացնելու մեջ, ինքն է մշտական ռազմաբազաներ տեղակայել Հայաստանում, Հարավային Օսիայում և Աբխազիայում՝ ընդգծելով ուժերի անհավասարակշռությունը **(Корнилов А., 2025):**

Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին ու ԵԱՏՄ-ին, ինչպես նաև 102-րդ ռազմաբազայի տեղակայումը վկայում են, որ նրա անվտանգության ճարտարապետությունը հիմնված էր Ռուսաստանի հետ դաշինքի վրա: Նոր global

ռիսկերի պայմաններում Արևմուտքը չունի արդյունավետ միջոցներ՝ այդ ներկայությունը հակակշռելու համար: Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները հիմնված են «Գործընկերություն հանուն խաղաղության» (PFP) ծրագրի վրա (1994 թ.): Հայաստանը աստիճանաբար գիտակցում է ՆԱՏՕ-ի ծրագրերի կարևորությունը, որոնք կարող են փոփոխություններ մտցնել անվտանգային լանդշաֆտում **(Ղևոնդյան Ա., 2018)**: 2020, 2022 և 2023 թվականների իրադարձություններից հետո Հայաստանում էապես նվազեց վստահությունը Ռուսաստանի՝ որպես երաշխավորի նկատմամբ: Դրանց հետևանքով Հայաստանը սառեցրել է մասնակցությունը ՀԱՊԿ-ին և բոյկոտել համատեղ զորավարժությունները: Երևանը ներկայացնում է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը **(Փաշինյան Ն., 2024)** և խորացնում համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ Անհատականորեն մշակված գործընկերության (ITPP), «Բարեվարքության ամրապնդման» և DEEP ծրագրերով:

Ռուսաստանի ավանդական լծակները կորցրել են իրենց ազդեցությունը, քանի որ Ուկրաինայում պատերազմը սպառել է Մոսկվայի կարողությունները: Ռուսաստանը Հարավային Կովկասի հակամարտություններն օգտագործում էր քաղաքական ճնշում գործադրելու համար: Հանգելով «սառեցված հակամարտությունների» պահպանմանը՝ Մոսկվան վարում է «բաժանիր և տիրիր» քաղաքականություն՝ խոչընդոտելով պետությունների ինտեգրմանը ՆԱՏՕ-ին: Սակայն հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ քայլերը կարևոր են տարածաշրջանային անվտանգության համար: Դաշինքի 2025 թ. տարեվերջյան զեկույցում նշվում է, որ մեծ նշանակություն է տրվում Հարավային Կովկասին, և վստահեցվել է, որ ՆԱՏՕ-ն հանձնառու է խորացնելու երկխոսությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ **(Rutten M., 2025)**:

Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի հետագա ներգրավվածության մարտահրավերները

ՆԱՏՕ-ն մեծ կարևորություն է տալիս Կովկասյան տարածաշրջանին և մտահոգություն արտահայտում այնտեղ լարվածության սրման կապակցությամբ: Դաշինքի ընդլայնման ապագա մարտահրավերների համապարփակ

վերլուծության համար անհրաժեշտ է ուսումնասիրել Ռուսաստանի դերը «մերձավոր արտասահմանում» և Մոսկվայի հակազդեցության միջոցները: ՆԱՏՕ-ն կարող է ծառայել որպես Ռուսաստանի քաղաքական ու ռազմավարական հակակշիռ և նպաստել տարածաշրջանի ինտեգրմանն իր ինստիտուտներին՝ գործընկերային ծրագրերի միջոցով: 2008 թ. Բուխարեստի գագաթնաժողովում Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ Ռուսաստանի սահմանների մոտ հզոր ռազմական դաշինքի գոյությունը ընկալում է որպես ազգային անվտանգությանն ուղղակի սպառնալիք **(Фенин К., 2026):**

ՆԱՏՕ-ն կարող է լինել Հարավային Կովկասում անվտանգության պարտադիր պայման, ինչը չի ենթադրում երկրների պարտադիր լիիրավ անդամակցություն: «Անվտանգության դեֆիցիտը» լուծելու ամենախոստումնալից միջոցը դաշինքի ծրագրերի աստիճանական ընդլայնումն է: ՆԱՏՕ-ն փորձում է զգուշորեն մեծացնել իր կշիռը՝ խուսափելով Ռուսաստանի հետ բացահայտ ռազմական բախումից և հաշվի առնելով երեք երկրների տարբեր քաղաքական վեկտորները: Մինչ Մոսկվան կառչած է իր ազդեցության գոտիներից, Արևմուտքը քայլեր է ձեռնարկում նրան զսպելու և սեփական դիրքերն ամրապնդելու ուղղությամբ:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի տարածաշրջանային այցն ընդգծեց դաշինքի ռազմավարական հետաքրքրությունը Հարավային Կովկասում: Բաքվում նա շեշտեց Ադրբեջանի ներդրումը դաշինքի առաքելություններում և կարևորեց խաղաղության հնարավորությունը Հայաստանի հետ: Թբիլիսիում քննարկումները կենտրոնացան Վրաստանի հետ համագործակցության խորացման վրա՝ վերահաստատելով 2008 թ. Բուխարեստի պարտավորությունները: Երևանում գլխավոր քարտուղարը հավանություն հայտնեց Հայաստանի անկախ արտաքին քաղաքականությանն ուղղված ջանքերին, վերահաստատեց աջակցությունը երկրի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև բարձր գնահատեց ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումն ու Ուկրաինային տրամադրվող մարդասիրական օգնությունը **(Kintsurashvili E., 2024):**

Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի ցանկացած ռազմական ներգրավվածություն կարող է առաջացնել Ռուսաստանի հակազդեցությունը: Կովկասը կարող է դառնալ կարևոր տարածաշրջանային կենտրոն՝ հատկապես էներգետիկ միջանցքների և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում: Դաշինքը պետք է ուշադիր հետևի զարգացումներին, սառեցված հակամարտություններին և էներգետիկ գործոններին, քանի որ Ռուսաստանն օգտագործում է այդ լծակները ՆԱՏՕ-ի ազդեցությունը սահմանափակելու համար: Արևմուտքի նոր պատժամիջոցների ֆոնին տարածաշրջանը կրկին հայտնվել է միջազգային ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, Ռուսաստանի ռազմավարության առաջնահերթությունը չի սահմանափակվում միայն ռազմական ներկայությամբ: Մոսկվան ձգտում է պահպանել անվտանգային կախվածության այնպիսի մեխանիզմներ, որոնք ապահովում են իր ազդեցությունը հետխորհրդային տարածքում: Հարավային Կովկասը դիտարկվում է որպես «մերձավոր արտասահմանի» ռազմավարական բաղադրիչ, որտեղ անվտանգության ճարտարապետության փոփոխությունն ընկալվում է որպես քաղաքական ազդեցության գոտի վերափոխելու փորձ: Հետևաբար, Ռուսաստանի արձագանքը արևմտյան դերակատարների ակտիվացմանը պայմանավորված է ուժային հավասարակշռության պահպանման երկարաժամկետ ռազմավարությամբ, ինչը համապատասխանում է նեոռեալիզմի հիմնադրույթին, ըստ որի՝ մեծ տերությունները ձգտում են պահպանել իրենց ազդեցության գոտիները և կանխել մրցակիցների ռազմավարական ներթափանցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի մրցակցությունը վերափոխվել է ավանդական ռազմական հակադրությունից դեպի բազմագործոն աշխարհաքաղաքական մրցակցության, որտեղ աճում է քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ գործոնների նշանակությունը: Հետխորհրդային շրջանից ի վեր տարածաշրջանում ձևավորվում

է բազմաբևեռ միջավայր, որտեղ Ռուսաստանի նախկին գերիշխող դերին զուգահեռ ակտիվորեն ներգրավված են նաև ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Թուրքիան և Իրանը:

ՆԱՏՕ-ի և Արևմուտքի ներգրավվածությունը հիմնականում անուղղակի և բազմաշերտ բնույթ ունի՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ համագործակցություն և էներգետիկ անվտանգություն: Միևնույն ժամանակ, Ուկրաինական պատերազմով պայմանավորված Ռուսաստանի ռեսուրսային սահմանափակումները նպաստել են Արևմուտքի ակտիվացմանը:

Տարածաշրջանի պետությունների քաղաքականությունն էականորեն տարբերակված է. Վրաստանը ձգտում է եվրաատլանտյան ինտեգրման, Ադրբեջանը վարում է բազմավեկտոր քաղաքականություն, իսկ Հայաստանը գտնվում է արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման փուլում: Ընդհանուր առմամբ, մոտակա հեռանկարում մրցակցությունը կզարգանա ոչ թե ուղղակի ռազմական բախման, այլ քաղաքական ու տնտեսական ազդեցության ձևերով, ինչը պետություններից պահանջում է ճկուն արտաքին քաղաքականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ղևոնդյան Ա. (2018),** ՀՀ-ՆԱՏՕ գործակցության դերն ու նշանակությունը ՀՀ ռազմաքաղաքական անվտանգության ապահովման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի». Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, № 3 (27), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 39-46:
2. **Մարգարյան Մ. (2023)**, Հարավային Կովկասը երբեք չի եղել Հյուսիսատլանտյան դաշինքի ուշադրության կենտրոնում: *https://armenpress.am/hy/article/1114327*
3. **Պողոսյան Ա. (2026),** ՌԴ ռազմական ներկայության իրավաքաղաքական հիմքեր, միջազգային պայմանագրեր և ռազմակայանների դուրսբերման գործընթացները Հարավային Կովկասում, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատ. ԺԷ, № 2 (63), Երևան, ՍԿՏՔՍՀԻ, էջ 58-65:

4. **Փաշինյան Ն. (2024)**, տեսանյութ. Ակնկալում ենք միջազգային հանրության, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հաստատակամ աջակցությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության գործընթացին: *https://www.a1plus.am/hy/article/470071*

5. **Захарова М. (2022)**, Официальный представитель МИД РФ заявила: Россия учитывала планы НАТО при подготовке концепции внешней политики. *https://www.vedomosti.ru/politics/news/2022/12/23/956785-rossiya-uchitivala-nato*

6. **Корнилов А. (2025)**, РФ призывает страны Южного Кавказа критически подходить к учениям с НАТО. *https://rg.ru/2025/05/06/rossiia-prizyvaet-strany-iuzhnogo-kavkaza-kriticheski-podojti-k-ucheniiam-snato.html*

7. **Фенин К. (2026)**, Блоковое размышление: в НАТО не готовы отказаться от расширения на восток, однако Вашингтон считает, что альянс не должен постоянно увеличиваться. *https://iz.ru/2053257/kirill-fenin/blokovoe-razmyshlenie-v-nato-ne-gotovy-otkazatsia-ot-rasshireniia-na-vostok*

8. **Iskandarov K., Simons G., Gawliczek P. (2019),** The South Caucasus: Stage for a 'New Great Game' between NATO and Russia?, *Connections: The Quarterly Journal*, Vol. 18, No. 2/3 (Summer-Fall), pp. 23–40. DOI: https://doi.org/10.11610/Connections.18.2-3.02

9. **Jiráček M. (2025, November),** *Three eastern partnership neighbours in the South Caucasus. Retrieved from https://www.europarl.europa.eu/ftu/pdf/en/FTU_5.5.7.pdf*

10. **Kakachia K., Gurbanli N., Valiyev A., Sukiasyan N., Meissner H., Leitner J. (2024),** Russia and the South Caucasus, *Russian Analytical Digest*, No. 322, ETH Zurich, DOI: https://doi.org/10.3929/ethz-b-000709021.

11. **Kruessmann T. (2024),** *The "Russian factor": implications for the EU's policy in the Black Sea/Caucasus region.* **Southeast European and Black Sea Studies**, № 24(3), 447–450.

12. **Kintsurashvili E. (2024)**, Stoltenberg in the South Caucasus. NATO sees an opportunity in a region where the balance of power could shift. Retrieved from *https://www.gmfus.org/news/stoltenberg-south-caucasus*

13. **Lampe F. (2023)**, Germany's national security strategy 2023 (GNSS 2023). What does it mean for Europe? Retrieved from *www.epc.eu/publication/Germanys-national-security-strategy-What-does-it-meanforEurope51f860/*

14. **Manukyan Z. (2024),** *Russia's Foreign Policy in the South Caucasus in the Context of Increasing New Regional Competition.* **Journal of Political Science: Bulletin of Yerevan University**, 3(8), VOL. 3, № 2 (8), September, 28-41. https://doi.org/10.46991/JOPS/2024.3.8.028

15. **Mearsheimer J. (2001),** The Tragedy of Great Power Politics. New York, W. W. Norton & Company.

16. **Morgenthau H. (2006)**, Politics Among Nations: The Struggle for Power and Peace. 7th Edition. New York, McGraw-Hill Education.

17. **National Security Strategy (NSS) (2022, October)**, Page 39. Retrieved from *https://bidenwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2022/11/8-NovemberCombined-PDF-for-Upload.pdf*

18. **National Strategic Review (NSR) (2022)**, Article 164, page 45. Retrieved from *https://www.sgdsn.gouv.fr/files/files/rns-uk-20221202.pdf*

19. **Rutten M. (2025)**, Secretary General Annual Report, page 45. Retrieved from *https://www.nato.int/content/dam/nato/webready/documents/publications-and-reports/annual-reports/sgar25-en.pdf*

20. **Waltz K. (1979)**, Theory of International Politics. Reading, Massachusetts: Addison-Wesley Publishing Company.

REFERENCES

1. **Ghevondyan A. (2018),** HH-NATO' gorc'akcowt'yan dern ow nshanakowt'yowny' HH r'azmaqaghaqakan anvtangowt'yan apahovman hamateqstowm /The Role and

Significance of RA-NATO Cooperation in the Context of Ensuring the Military-Political Security of the RA/, Bulletin of Yerevan University: International Relations, Political Science, No. 3 (27), Yerevan, YSU Publishing House, pp. 39–46.

2. **Margaryan M. (2023),** Haravayin Kovkasy' erbeq chi eghel Hyowsisatlantyan dashinqi owshadrowt'yan kentronowm /The South Caucasus Has Never Been in the Focus of the North Atlantic Alliance, *Armenpress*, available at/: https://armenpress.am/hy/article/1114327
3. **Poghossyan A. H. (2026),** R'D r'azmakan nerkayowt'yan iravaqaghaqakan himqer, mijazgayin paymanagrer & r'azmakayanneri dowrsberman gorc'y'nt'acnery' Haravayin Kovkasowm /Legal and Political Grounds of RF Military Presence, International Treaties and the Process of Withdrawal of Military Bases in the South Caucasus/, Region and the World, Vol. XVII, No. 2 (63), Yerevan, PSIRCSRC, pp. 58–65.
4. **Pashinyan N. (2024),** Video: Aknkalowm enq mijazgayin hanrowt'yan, ayd t'vowm՝ NATO'-i hastatakam ajakcowt'yowny' Hayastani & Adrbejani mij& xaghaghowt'yan gorc'y'nt'acin /We Expect the Firm Support of the International Community, Including NATO, for the Peace Process Between Armenia and Azerbaijan/, A1plus, available at: https://www.a1plus.am/hy/article/470071
5. **Zakharova M. (2022),** Ofitsial'nyy predstavitel' MID RF zayavila: Rossiya uchityvala plany NATO pri podgotovke kontseptsii vneshney politiki /Official Representative of the Russian Foreign Ministry Stated: Russia Took NATO's Plans into Account when Preparing the Foreign Policy Concept/, *Vedomosti*, available at:/ https://www.vedomosti.ru/politics/news/2022/12/23/956785-rossiya-uchitivala-nato
6. **Kornilov A. (2025)**, RF prizyvayet strany Yuzhnogo Kavkaza kriticheski podkhodit' k ucheniyam s NATO /The Russian Federation Urges South Caucasus Countries to Take a Critical Approach to Exercises with NATO, *Rossiyskaya Gazeta*, available at:/ https://rg.ru/2025/05/06/rossiia-prizyvaet-strany-iuzhnogo-kavkaza-kriticheski-podojti-k-ucheniiam-snato.html

7. **Fenin K. (2026),** Blokovoye razmyshleniye: v NATO ne gotovy otkazat'sya ot rasshireniya na vostok, odnako Vashington schitayet, chto al'yans ne dolzhen postoyanno uvelichivat'sya /Bloc Thinking: NATO is Not Ready to Abandon Eastern Expansion, but Washington Believes the Alliance Should Not Constantly Expand, *Izvestia*, available at:/ https://iz.ru/2053257/kirill-fenin/blokovoe-razmyshlenie-v-nato-ne-gotovy-otkazatsia-ot-rasshireniia-na-vostok
8. **Iskandarov K., Simons G., Gawliczek P. (2019),** The South Caucasus: Stage for a 'New Great Game' between NATO and Russia?, *Connections: The Quarterly Journal*, Vol. 18, No. 2/3 (Summer-Fall), pp. 23–40. DOI: https://doi.org/10.11610/Connections.18.2-3.02
9. **Jiráček M. (2025, November),** *Three eastern partnership neighbours in the South Caucasus. Retrieved from https://www.europarl.europa.eu/ftu/pdf/en/FTU_5.5.7.pdf*
10. **Kakachia K., Gurbanli N., Valiyev A., Sukiasyan N., Meissner H., Leitner J. (2024),** Russia and the South Caucasus, *Russian Analytical Digest*, No. 322, ETH Zurich, DOI: https://doi.org/10.3929/ethz-b-000709021.
11. **Kruessmann T. (2024),** *The "Russian factor": implications for the EU's policy in the Black Sea/Caucasus region.* **Southeast European and Black Sea Studies**, № 24(3), 447–450.
12. **Kintsurashvili E. (2024)**, Stoltenberg in the South Caucasus. NATO sees an opportunity in a region where the balance of power could shift. Retrieved from *https://www.gmfus.org/news/stoltenberg-south-caucasus*
13. **Lampe F. (2023)**, Germany's national security strategy 2023 (GNSS 2023). What does it mean for Europe? Retrieved from *www.epc.eu/publication/Germanys-national-security-strategy-What-does-it-meanforEurope51f860/*
14. **Manukyan Z. (2024),** *Russia's Foreign Policy in the South Caucasus in the Context of Increasing New Regional Competition.* **Journal of Political Science: Bulletin of Yerevan University**, 3(8), VOL. 3, № 2 (8), September, 28-41. https://doi.org/10.46991/JOPS/2024.3.8.028

15. **Mearsheimer J. (2001),** The Tragedy of Great Power Politics. New York, W. W. Norton & Company.
16. **Morgenthau H. (2006)**, Politics Among Nations: The Struggle for Power and Peace. 7th Edition. New York, McGraw-Hill Education.
17. **National Security Strategy (NSS) (2022, October)**, Page 39. Retrieved from *https://bidenwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2022/11/8-NovemberCombined-PDF-for-Upload.pdf*
18. **National Strategic Review (NSR) (2022)**, Article 164, page 45. Retrieved from *https://www.sgdsn.gouv.fr/files/files/rns-uk-20221202.pdf*
19. **Rutten M. (2025)**, Secretary General Annual Report, page 45. Retrieved from *https://www.nato.int/content/dam/nato/webready/documents/publications-and-reports/annual-reports/sgar25-en.pdf*
20. **Waltz K. (1979)**, Theory of International Politics. Reading, Massachusetts: Addison-Wesley Publishing Compa.

Артём Погося

ТРАНСФОРМАЦИЯ ГЕОПОЛИТИЧЕСКОГО БАЛАНСА СИЛ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В КОНТЕКСТЕ СОПЕРНИЧЕСТВА РОССИИ И НАТО / ЕС

Заключение

Ключевые слова и выражения: *Южный Кавказ, НАТО, Россия, стратегия, геополитические интересы, интеграционные процессы, энергетическая безопасность, столкновение интересов.*

Данная статья посвящена геополитическому соперничеству расстановки сил между Россией и НАТО/ЕС на Южном Кавказе с особым акцентом на интеграционные процессы и энергетическую безопасность. В частности, анализируются подходы НАТО и точки пересечения конфликта интересов на Южном Кавказе, отраженные в стратегических документах. В исследовании обосновывается, что Россия обеспечивает свое влияние как через двусторонние

отношения, так и через многосторонние структуры, в частности ОДКБ. В то же время НАТО применяет в регионе многоуровневый и динамичный подход (например, программу «Партнерство ради мира»), изучение которого имеет важное значение для понимания современных региональных процессов и тенденций в международных отношениях.

Новизна исследования заключается в том, что трансформация баланса сил рассматривается в неореалистической аналитической рамке с учетом пяти взаимосвязанных факторов: военное присутствие, реконфигурация альянсов, энергетические и транспортные коридоры, многовекторная политика и глобальные кризисы. Анализ показывает, что, особенно после войны в Украине, ресурсные ограничения России и активизация Запада углубили динамику соперничества, сформировав многополярную среду, в которой три государства Южного Кавказа (Грузия, Азербайджан и Армения) демонстрируют существенно дифференцированное стратегическое поведение.

На основе сравнительного анализа этих двух структур сделан вывод о том, что система безопасности Республики Армения, сопоставляя государственные и региональные реалии, должна строить собственную архитектуру безопасности путем совмещения существующих интересов и диверсификации внешней политики.

Artyom Poghosyan

THE TRANSFORMATION OF THE GEOPOLITICAL BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS IN THE CONTEXT OF COMPETITION BETWEEN RUSSIA AND NATO/EU

Conclusion

Key words and expressions: *South Caucasus, NATO, Russia, strategy, geopolitical interests, integration processes, energy security, conflict of interests.*

This article addresses the geopolitical power competition between Russia and NATO/EU in the South Caucasus, with a special focus on integration processes and energy

security. In particular, it analyzes NATO's approaches and points of conflicting interests in the South Caucasus as reflected in strategic documents. The study demonstrates that Russia secures its influence through both bilateral relations and multilateral structures, notably the CSTO. At the same time, NATO applies a multilayered and dynamic approach in the region (e.g., the "Partnership for Peace" program), the study of which is essential for understanding current regional developments and trends in international relations.

The novelty of the research stems from viewing the transformation of the balance of power within a neorealist analytical framework, combining five interconnected factors: military presence, reconfiguration of alliances, energy and transport corridors, multi-vector policies, and global crises. The analysis shows that, particularly in the aftermath of the war in Ukraine, Russia's resource constraints and the West's growing activity have intensified competitive dynamics, giving rise to a multipolar environment in which the three South Caucasus states (Georgia, Azerbaijan, and Armenia) exhibit significantly differentiated strategic behavior.

Based on a comparative analysis of these two structures, the article concludes that the security system of the Republic of Armenia—combining state and regional realities—must build its own security architecture through the harmonization of existing interests and the diversification of its foreign policy.

Արտյոմ Պողոսյան – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հայցորդ, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի պետի տեղակալ, գնդապետ: Գիտական հետաքրքրությունները՝ Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում՝ 1991-2023 թթ.: Հեղինակ է 5 հոդվածի: artyomhovhannesi@gmail.com **ORCID:** 0009-0004-4299-1460

Артём Погосян – Соискатель Института востоковедения Национальной академии наук Республики Армения, заместитель начальника Военной академии имени Вазгена Саргсяна МО РА, полковник. Сфера научных интересов: военное

присутствие России на Южном Кавказе в 1991–2023 гг. Автор 5 статей. artyomhovhannesi@gmail.com **ORCID:** 0009-0004-4299-1460

Artyom Poghosyan – Applicant at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Deputy Head of the Vazgen Sargsyan Military Academy of the Ministry of Defense of the Republic of Armenia, Colonel. Research interests: Russia's military presence in the South Caucasus in 1991–2023. Author of 5 articles. artyomhovhannesi@gmail.com

ORCID: 0009-0004-4299-1460

Խմբագրություն է ուղարկվել 08.07.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 28.07.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.